

2040

24

F-90

1895

010

# ԱՇԽԱՐՀԻ ՄԷԶ ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱՆԼ

ԳՐԵՑ

ՓՐՈՒԹ. ՀԵՆՐԻ ՏՐԵՄՄԵՆՏ

Թարգմանեալ Անգլիերեն

معارف عمومية نظارت جليل سنك ۱۸ جاذی الآخر  
و ۲۹ كانون اول ۳۰۸ تاریخی و ۱۴۲ نومرو  
رخصتامة سیله شر او نشور

صاراف آمریقان مسیوزر شرکتی طرفندن تسويه او شرق طبع او نشور

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈՂԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՕՅԱՃԵԱՆ

1895

24  
7-90

ԱՇԽԱՐՀԻ ՄԷՋ

ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱՆԸ

ԳՐԵՑ

ՓՐՈՖ. ՀԵՆՐԻ ՏՐԵՄՄԵՆՏ

Թարգմանեալ Անգլիերենէ

معارف عمومية نظارت جليلستك ۱۸ جاذی الآخر ۳۱۰  
و ۲۶ كانون اول ۳۰۸ تاريخی و ۱۴۲ نومروی  
رخصتامد سیله نشر او شدر

صاراف آمریقان مسیونر شرکتی طرفندن تسوید او لهرق طبع او شند

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ  
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Ա. Յ. ՊՈՅԱԶԵԱՆ

1895



թէ որ մարդոց ու հրեշտակներուն լեզուները  
խօսիմ՝ եւ սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի  
պէս եղայ, կամ հնչեցող ծնծղաներու պէս։ Եւ  
թէ որ մարգարէութիւն ունենամ, ու հասկընամ  
ամէն խորհուրդները ու ամէն գիտութիւնը, եւ  
թէ որ ունենամ ամէն հաւատքը մինչեւ լեռները  
աեղափոխելու, ու սէր չունենամ՝ ոչինչ եմ։ Եւ  
թէ որ իմ բոլոր ստացուածքս աղքատներուն  
կերցընեմ, ու իմ մարմինս այրուելու տամ, եւ  
սէր չունենամ՝ օգուտ մը չեմ ունենար։

Սէրը երկայնամիտ է, քաղցր է։

Սէրը չնախանձիր,

Սէրը չգոռոզանար, չնպարտանար,

Անվայիլ վարմունք չունենար,

իրենը չփնտուիր,

Բարկութեան չզրգառուիր,

Չարութիւն չխորհիր,

Անիրաւութեան վրայ չխնդար, հապա

ճշմարտութեան խնդակից կ'ըլլայ,

Ամէն բանի կը զիջանի, ամէն բանի կը

հաւատայ, ամէն բանի կը յուսայ,

ամէն բանի կը համբերէ։

Սէրը բնտւ չինար։ բայց թէ որ մարգարէու  
թիւններ ըլլան՝ պիտի խափանին, թէ որ լեզու-  
ներ՝ պիտի դադարին, թէ որ գիտութիւն՝ պիտի  
խափանի։ Ինչու որ շատէն քիչը զիտենք՝ ու շա-  
տէն քիչը կը մարգարէանանք։ բայց երբոր կա-  
տարեալը զայ, անատենք շատէն քիչը պիտի խա-  
փանի։ Երբոր տղայ էի՝ տղայի պէս կը խօսէի,

01

53339-ակ



39373-67

տղայի պէս կը խորհէի, տղայի պէս համարում  
ունէի . բայց երբոր այր եղայ, տղայութեան բա-  
ները մէկդի ձգեցի : Քանզի հիմա մենք որպէս թէ  
հայելի մէջ կը տեսնենք անցայտ կերպով, բայց  
անատենը երես առ երես . հիմա շատէն քիչ մը  
տեղեակ եմ, բայց անատենը անանկ պիտի ճանչ-  
նամ ինչպէս որ ճանչցուեցայ : Ուստի հիմա կը  
մնայ Հաւատք, Յոյս, Սէր՝ առ երեքը, ու ասոնց  
մեծագոյնը Սէրն է : Ա. Կոր. ԺԴ. :

-----

## Ա.ՇԽԱՐՀԻ ՄԵԶ

### ՄԵԾԱԳՈՅՆ ԲԱՆԸ

-----

Ամէն ոք ինքնիրեն հարցուցած է սա հար-  
ցումը որ կարեւորագոյն համարուած է ան-  
ցելոյն մէջ և կը համարուի տակաւին . ի՞նչ է  
ժերադոյն բարի : Ահա ունիմ կեանք մը, զոր  
կընամ վարել մի անդամ միայն . ի՞նչ է փա-  
փարելի աղնուագոյն բանը, ցանկալի գերա-  
գոյն բարին :

Առ հասարակ կ'ըսուի թէ կրօնական աշ-  
խարհի մէջ մեծագոյն բանն է Հաւատք : Դա-  
րերէ հետէ այդ եղած է ժողովրդոց կրօնին  
գլխաւոր յատկանիշը . և մենք վարժուած ենք  
նկատել զայն իբրեւ աշխարհի մեծագոյն բա-  
նը : Սակայն սխալ է այդպէս նկատել : Առ  
կորնթացիս Ա. Թղթոյն Ժ.Գ դլուխը, զոր կը  
գնենք տետրակիս սկիզբը, բուն ակն է Քրիս-  
տոնէութեան : Հնա կը խօսի Պօղոս Քրիստո-  
նէական այլ և այլ չորհաց և պարզեւնելու  
վրաց, կը բաղդատէ զայնս լլջօրէն և կը յայ-  
տարարէ սապէս . “թէ որ ունենամ ամէն  
հաւատքը մինչեւ լեռները տեղափոխելու, ու  
սէր չունենամ” ոչինչ եմ : ” Եւ դարձեալ,

“Հիմա կը մնայ հաւատք, յոյս, սէր է”, Եւ  
առանց վարանման կ’արձակէ սա վճիռը. “Ու  
ասոնց մեծագոյնը սէրն է ։”

Արդ, նախապաշտում չէ այս ։ Գիտենք  
թէ մարդ ստիրաբար կը խրատէ զայլս ընել  
ինչ որ ինք կ’ընէ յաջողապէս կամ կը սիրէ  
առաւելապէս. սակայն Սէր չէր ինչ որ Պօղոս  
ունէր կամ կը ցուցնէր առաւելապէս ։ Նորա  
թղթոց ուշադիր ընթեցողը կարող է տեսնել  
նկարագրի անոյշ ազնուութիւն մը որ անդուլ  
կը զարդանար և ի կատարելութիւն կը հաս-  
նէր մինչ կը ծերանար Պօղոս ։ Սակայն ձեռքը  
որով դրեց, “Ասոնց մեծագոյնը սէրն է, ո  
արխնով արատաւորուած կ’երեւի մեզ առա-  
ջին անգամ ։”

Բայց աստի, առ կորնթացիս գրուած այս  
թուղթը չէ միակ թուղթը որ կը ցուցնէ թէ  
սէր է չեւադրյա բարձր առաքեալք զնոյն  
կը վարդապետեն ։ Քետրոս կ’ըսէ, “Ամէն բա-  
նէն առաջ իրարու հետ սրտանց սէր ունե-  
ցէք ։” Ամէն բան առաջ իսկ Յովիհաննէս ա-  
ւելի յառաջ կ’երթայ, և կ’ըսէ, “Աստուած  
սէր է ։” կը յիշէք գուք այն խորիմաստ խօս-  
քը, զոր Պօղոս կ’ըսէ ուրիշ տեղ մը, թէ  
“Օքէնքին լրումը սէր է ։” Երբեք խորհանձ էք  
թէ ի՞նչ ուզեց ըսել այդ խօսքով ։ Այն ժա-  
մանակ մարդիկ կ’աշխատէին երկնք երթալ  
պահելով Տանարանեայն և ուրիշ հարիւրա-  
ւոր պատուիրաններ զորս հետեւցուցած էին

Տամնաբանեայէն ։ Քրիստոս ըստ, Ես պիտի  
ցուցնեմ ձեզ աւելի պարզ ճանապարհ մը.  
բան մը կայ, եթէ զայն ընէք, այնուհետեւ,  
առանց երբեք խորհելու, պիտի ընէք դուք  
այդ հարիւրաւոր բանեղը ։ Այն բանն է Սէր ։  
Եթէ սիրէք, առանց զգալու պիտի կատարէք  
բոլոր օրէնքը ։ Եւ գիւրաւ կրնաք հասկնալ  
թէ ի՞նչպէս կարելի է այս Առնենք, օրինակի  
համար, Տամն Պատուիրանաց մին . “Ինձմէ  
զատ ուրիշ աստուածներ չունենաս ։” Եթէ  
ոք կը սիրէ զիստուած, պէտք կ’ունենա՞ք ա-  
նոր յիշեցունել զայս ։ Սէրը լրումն է այդ օ-  
րինաց ։ “Տէրողը քու Աստուծոյդ անունը պա-  
րապ տեղը բերանդ չառնես ։” Եթէ ոք կը  
սիրէ զնա, պիտի համարձակի՞ երբեք ի բե-  
րան առնուլ անոր անունն ի զուր ։ “Հանդըս-  
տութեան օրը միտքդ բեր՝ անիկա սուրբ պա-  
հելու համար ։” Եթէ ոք կը սիրէ զիստուած,  
ուրախաւթիւն պիտի չզգայ իւր սիրոց առար-  
կային նուիրելով եօթն օրերէն մին առաւե-  
լապէս և բացարձակապէս ։ Սէրը պիտի նու  
Աստուծոյ վերաբերեալ բոլոր այս օրէնքները ։  
Նմանապէս, Եթէ ոք կը սիրէ զմարդ, երբեք  
հարկ չենք տեսներ ըսել անոր, “Պատուէ  
քու հայրդ ու մայրդ ։” Անշոշտ պիտի պատ-  
ուէ զանոնք դարձեալ, անտեղի է պատուի-  
րել անոր, “Ապանութիւն մի ըներ ։” Պիտի  
նախատէք զնա, Եթէ յիշեցունէք սա պատ-  
ուէրը, “Գողութիւն մի ըներ ։” Ի՞նչպէս կա-

ըող է նա դոդիալ այն անձերէն զորս կը սիւրէ: Աւելորդ է ըսել ամոր “Քու դրացիիդ դէմ սուտ վկայութիւն մի ըներ:” Եթէ կը սիրէ զնա, երբեք պիտի չընէ այդպիսի բան: Դարձեալ, երբեք պիտի չխորհիք յորդորել զնա չշանկալ իւր դրացւոյն ունեցածին: Նա պիտի բաղձայ որ զայնա վայելէ իւր դրացին մանաւանդ քան ինքը: Ս.յս եղանակաւ “Օրէնքին լրումը սէր է:” Սէր է այն կանոնը որով կը կատարուին բոլոր կամոնները, Սէր է նոր պատուիրանը որով կը պահուին բոլոր հին պատուիրանները, Սէր է Քրիստոսի միակ գաղտնիքն Քրիստոնէական կենաց:

Պօղոս գիտէր զայս, և այս պատուական գովեստին մէջ կու տայ մեզ հերածն բարեաց գեղեցկագոյն և ճշմարտագոյն նկարադրութիւնը: Կրնանք բաժնել զայն երեք մաս: Կարճ գլխոյն առաջին մասին մէջ Սէրը կը բաղդատուի ուրիշ պարգեւներու հետ, երկրորդ մասին մէջ Սէրը կը վերլուծուի, երրորդին մէջ կը ցուցուի թէ Սէրն է գերագոյն պարգեւը:

### ԲԱՂԴԱՏՈՒԹԻՒՆ

Պօղոս կը բաղդատէ Սէրը նախ ուրիշ բաներու հետ որոց մեծ կարեւորութիւն կ'ընծայէին այն ժամանակի մարդիկ: Հոս մի առ մի պիտի չյիշուին այն բաները: Արդէն յայտնի է անոնց ստորևութիւնը:

Կը բաղդատէ զայն պերճախօսութեան հետո: Պատուական պարզեւ է պերճախօսութիւնը: Մեծ աղդեցութիւն ունի մարդոց հոգիներուն և կամքին վրայ և կու տայ ընարել վսեմ նպատակներ և կատարել սուլբ գործեր: Պօղոս կ'ըսէ, “Թէ որ մարդոց ու հրեշտակներուն լեզուները խօսիմ” և սէր չունենամ, ես ձայն տուող պղինձի պէս եղայ, կամ հնչեցող ծնծղաներու պէս:” Ամէնքս կը հասկնանք թէ ինչո՞ւ այսպէս է: Ամէնքս զգացած ենք թէ ո՛չափ անազգեցիկ են առանց զգացման ըստած խօսքերը և ո՛չափ դատարկ և անշօր է պերճախօսութիւնն առանց սիրոյ:

Կը բաղդատէ մարդարէութեան հետ, կը բաղդատէ խորհուրդներու հետ, կը բաղդատէ հաւատոյ հետ, կը բաղդատէ բարեսիրութեան հետ: Ինչո՞ւ Սէրը մեծ է քան հաւատոքը: Վասն զի նպատակը մեծ է քան միւնչոյը: Ինչո՞ւ մեծ է քան բարեսիրութիւնը: Հոյը: Ինչո՞ւ մեծ է քան բարեսիրութիւնը: Վասն զի ամբողջը մեծ է քան մասը: Սէրը մեծ է քան հաւատոքը, վասն զի նպատակը մեծ է քան միջոյը: Ի՞նչ է հաւատոյ օգուտը: Մեծ է քան հաւատոյ օգուտն է Աստուծոյ հետ կապակչաւատոյ օգուտն է Եւ ի՞նչ է զմարդ Աստուծոյ հետ կապակցելուն նպատակը: Սա է որ նա Աստուծոյ նմանի: Սակայն Աստուծ Սէր է: Հետեւապէս հաւատոքն է միջոց որով պիտի հասնինք Սիրոյ, որ է վախճանը կամ նպատակը Ռուրեմն յայտնի է թէ Սէրը մեծագոյն է քան Ռուրեմն յայտնի է թէ Սէրը մեծագոյն է քան

Հաւատոքը։ Դարձեալ, մեծագոյն է քան ողորմութիւնը կամ բարեսիրութիւնը, վասն զի ամբողջը մեծագոյն է քան մասը։ Ողորմութիւնը Սիրոյ մի փոքրիկ մասն է միայն, Սիրոյ անթիւ գործերէն մին է միայն, և շատ անգամ ողորմութիւն տրուած է և կը տրուի առանց Սիրոյ խիկ։ Դիւրիւ բան է դրամ նետել փողոցի մուրացկանին. շատ անգամ յոյժ աւելի դիւրին է այս քան բնաւ չտալ։ Սակայն նոյնափառ յաճախ Սէր կրնայ յայտնուիլ չտալ մանաւանդ քան տալով։ Մուրացկանին տրուած ողորմութեամբ կ'ազատինք այն համական զգացումներէն որք մեր մէջ յառաջ կու գան ի տես մուրացկին թշուառ կացութեան։ Այս ազատումն է շատ աժան, շատ դիւրագնի մեզ համար, և յաճախ շատ սուզ մուրացկին համար։ Եթէ իրականապէս սիրէն ինք զնա, կամ աւելի շատ պիտի տայինք, կամ բնաւ պիտի չտայինք։

Ապա Պօղսո կը բազգատէ զոհողութեան և մարտիրոսութեան հետ։ Կը լինդրեմ որ ձենէ այնպիսիք որ նպատակ ունին Աւետարանի պաշտօնեայ ըլլալ ապագային մէջ՝ յիշեն թէ եթէ այրուերու տան իրենց մարմինը և սէր չոնենան, անօգուտ պիտի ըլլան, անօգուտ ։ Մարդոց կամ իրենց հօտին ոչինչ կրնան տանիլ աւելի մեծ քան այն աղդեցութիւնը կամ գործը զոր Աստուծոյ Սէրն ըրած է իրենց նկարագրին կամ բնաւորութեան վրայ։ Այդ

պիտի աղդէ ամէն մարդու անվրէպ, ինքնին պիտի խօսի ամէն մարդու ամենայն աղդուութեամբ։ Բուն մարդն է Աւետարանիշը, և ոչ մարդուն խօսքերը։ Աւետարանշին բնաւորութիւնն է իւր քարոզը։ Ավրիկէի խորը, մեծ լիճերուն մէջտեղ, տեսնուած են սեւամորթարք և կանայք ողք կը յիշէն այն միակ սպիտել գոր երբեք տեսած էին յառաջագոյն—Տէյվիտ Լիվինկոմթըն։ Այն խաւարերկին մէջ, մինչ կը հանդիպէք անոր հետաքերուն, կը տեսնէք թէ մարդոց երեմներուն վրայ ուրախութիւն կը փայլի, երբ կը խօսին վրայ ուրախութիւն կը փայլի, այն բարեսիրտ անձին վրայ որ տարիներ առաջ անցաւ իրենց երկրէն։ Զէին հասկնար անոր լեզուն, բայց կը զգային Սէրը որ կը զեղար անոր սրտին մէջ։ Այս պարզ, բայց թուվէ հրապոյրը ցուցէք միշտ ուր և երթաք, և ահա պիտի յաջողի ձեր կենաց գործը։ Ոչ ինչ կրնաք ցուցնել քան զայս մեծագոյն, և ոչ ինչ պարտիք ցուցնել քան զայս փոքրագոյն։ Կրնաք ունենալ ամէն ուսում և կատարելութիւն, կրնաք ըլլալ պատրաստ ամէն զոհութեան համար, սակայն եթէ այրուելու տաք ձեր մարմինը և սէր չոնենաք, ոչինչ օդուտ է ձեզ և Քրիստոսի փաստին։

ՎԵՐԱՌԵՎՈՒՄՆ

Յետ սոյն բազգատութեան, երեք կարձ համարներու մէջ ոքանչելի կերպով կը վերլու-

ծէ Պօղոս այս գերադոյն բանը։ Պէտք է քաջ ուշադիր ըլլալ։ կ'ըսէ մեղ թէ բաղադրեալ է այն։ Լուսոյ նման է։ Ճեսած էք դուք դիւտուն մարդիկ որ կ'առնեն լուսոյ ճառագայթ մը և կ'անցունեն հատուածակողմ ապակիէ։ Ճեսած էք թէ այն ճառագայթն ապա կ'երեւի հատուածակողմ ապակույն միւս կողմը, բայց բաժնուած այն գոյներուն յորոց բաղադրեալ է, այսինքն՝ կարմիր, կապոյտ, դեղին, և ծիածանի բոլոր միւս գոյներուն։ Նոյն պէս Պօղոս իւր ներշնչեալ իմացականութեան հոյակապ հատուածակողմէն կ'անցունէ այս բանը, և ահա միւս կողմը կ'երեւի բաժնուած այն տարրերուն յորոց բաղադրեալ է։ Պօղոսի այս քանի մը բառերով կը տրուի մեղ Սիրոյ նկարը կամ վերլուծումը։ կը հաճի՞ք դիտեն լ խնամով թէ ի՞նչ են իւր տարրերը։ կը տեսնէք թէ ունին հասարակ անուններ, թէ առաքինութիւններ են որոց վրայ ամէն օր կը լսենք, թէ բաներ են զրոս ամէն մարդ կարող է ամէն ուրեք ի գործ դնել իւր կենաց մէջ։ կը տեսնէք թէ ի՞նչպէս գերադոյն բանը, ի՞ւրաքանչ բարձր, կազմուած է բաղում փոքրիկ բաներէ և հասարակ առաքինութիւններէ։

Սիրանկարն ունի ինն տարր։ —

Համբերութիւն . . . «Սէրը երկայնամիտ է»։ Բաղցրութիւն . . . «Բաղցը է»։

Մեծանձնութիւն . . . «Սէրը նախանձիր է»։ Խոնարհութիւն . . . «Սէրը չգոռողանար, չպարտանար»։ Քաղաքավարութիւն «Անվայել վարմունք չունենար»։ Անշահախնդրութիւն «Իրենը չփնտռեր»։ Հեղաբարյութիւն «Բարկութեան չդրդըռուիր»։ Աննենդութիւն . . . «Զարութիւն չխորհիր»։ Անկեղծութիւն . . . «Անիրաւութեան վրայ չխնդար, հապա ճշմարտութեան լնդակից կ'ըլլայ»։

Ահա համբերութիւն, քաջցրութիւն, մեծանձնութիւն, խոնարհութիւն, քաղաքավարութիւն, անշահախնդրութիւն, հեղաբարյութիւն, աննենդութիւն, անկեղծութիւն կը յութիւն, գերադոյն պարգեւը, կատարեալ մարդոյն նկարագիրը։ կը տեսնէք թէ այս բոլոր յատկութիւնները վերաբերութիւն ունին մարդոյ, կենաց, ծանօթ այս աւուր և մօտակայ վաղորդայնի, և ոչ անծանօթ յատկուենականութեան։ Շատ բան կը լսենք առ Աստուած սիրոյ վրայ։ Գրիստոս շատ խօսեցաւ առ մարդիկ սիրոյ վրայ։ Յոյժ կարեւոր և պատուական կը համարինք երկնից հետ հաշտ ըլլալ քրիստոս յոյժ կարեւոր համարեցաւ որ երկրի վրայ հաշտ ըլլանք միմեանց հետ։ կը օնն օտարուոի կամ եկամուտ բան չէ,

այլ՝ աշխարհային կենաց ներշնչութիւն, և յաշ վիտենականութեան գաղափար կը մուծանէ անցաւոր աշխարհի մէջ՝ գերադոյն բանն, համառօտիւ, եւ մը չէ, այլ՝ ի կատարելութիւն բերել մեր ամէնօրեայ կենաց բազմաթիւ խօսքերը և գործերը:

Հարեւանցի ակնարկ մը միայն կրնանք նետել Սիրոյ այս տարրերէն իւրաքանչիւրին վրայ: Սէրը համերութիւն է: Այս է սիրոյ բնական կայութիւնը, կրատորական սիրոյ՝ որ կը սպասէ սկսելու համար. չաճապարեր, հանդարտ է. պատրաստ է սկսիլ իւր գործը երբ պահանջուի, բայց նոյն ժամանակ կը կրէ հեզ և հանդարտաբարոյ հոգւոյ դարդը: Սէրը երկայնամիտ է. ամէն բանի կը զիշանի, ամէն բանի կը հաւատայ, ամէն բանի կը յուսայ: Վասն զի սէրը կը հասկնայ, և ուստի կը սպասէ:

Քաղցրութիւն: Ներգործական սէր: Դիտած էք երբեք թէ Քրիստոս իւր կենաց մեծ մասն անցուց քաղցը գործեր ընելով, հայո բարիք գործելով: Զայս ի մոտի ունելով քննեցէք միանդամ Քրիստոսի կեանքը, և պիտի տեսնէք թէ իւր ժամանակին մեծ մասն անցուց ժողովրեան երջանկութեան համար աշխատելով, ժողովրդեան բարիք ընելով: Աշխարհի վրայ միայն մէկ բան կայ մեծագոյն քան երաշանկութիւն, և այդ բանն է սրբութիւն. սաշանկայն մեր կարողութենէն վեր է սրբել զմար-

դիկ: Ինչ որ Աստուած դրած է մեր կարողութեան սահմանին մէջ՝ մեր շուրջ բնակող անձանց երջանկութիւնն է. և զայդ կրնանք ձեռք բերել ի մասնաւորի քաղցրութիւն ցուցընելով անցանց:

“Մեծագոյն բանը զոր կրնայ մարդ, ” ըստած է ոմն, “ընել իւր երկնաւոր Հօր համար, քաղցրութիւն ցուցնել կամ բարիք ընել է անոր միւս զաւակաց: ” Ինչու աւելի քաղցը և բարեսէր չենք: Աշխարհ ո՛բքան կը կարօտի քաղցրութեան և ո՛բքան դիւրին է զբարիս գործել: Ո՛բքան արագ կը ներգործէ այն, ո՛բքան կը յիշատակուի անվիքպ, ո՛բքան առաջատամբ կը վարձատրուի իւր իսկ արդեամբ—վասն զի աշխարհի վրայ չկայ Սիրոյ չափ պատուաւոր և գերազանցապէս պատուաւոր պարտապան: ” Սէրը բնաւ չինար: ” Սէրն յաջողութիւն է, Սէրը երջանկութիւն է, Սէրը կեանք է: ” Սէրը, կ'ըսեմ, ոյժ է կենաց: ” Ուր սէր կայ, անդ է Աստուած: ” Անոր սիրոյ մէջ կը բնակի՝ Աստուածոյ մէջ կը բնակի: ” Աստուած սէր է: Ուստի գէւցէ: Սիրեցէք առանց խարութեան, առանց հաշուի, առանց յապարման: Սիրեցէք աղքատները, գործ՝ որ գիւրին է, ի մասնաւորի մեծատունները՝ որք շատ անդամ աւելի պէտք ունին, սիրոյ, և մանաւանդ, որ գժուարագոյնն է, սիրոյ, և մանաւանդ, որ գժուարագոյնն է, սիրոյ ձեր ընկերները, հաւասարները, որոց նկատմամբ թերեւս ամէնքս աւելի

անտարբեր ենք։ Տարբեր բան է զանալ համելվ  
ըլլու, և տարբեր բան է համոյշ բարձր Հաճոյք  
տուէքք։ Հաճոյք տալու պատեհութիւն մի կոր-  
սիրնցունէք երբեք։ Վասն զի այդ է ճշմարիտ  
սիրողի ընական և անանուն յաղթանակը։  
“Միայն մի անգամ պիտի անցնիմ այս աշ-  
խարհէս։ Ուստի ամէն բարի բան զոր կընամ  
ընել, կամ ամէն քաղցրութիւն զոր կընամ  
ցուցնել, հիմա ընեմ կամ ցուցնեմ։ Զյա-  
պաղեմ կամ զանց չընեմ զայն, վասն զի ոչ  
ևս պիտի անցնիմ այս ճանապարհէն։”

ՄԵՇԱՀՅԱՆ-ՌԵՆ : «Սէրը նախանձիր»՝ Ե՛րբ  
ալ փորձէք գործել բարի գործ մը, պիտի  
տեսնէք թէ ուրիշներ եւս կը գործեն այն  
գործը, և հաւանականապէս կը գործեն լա-  
ւագոն եղանակաւ : Մի նախանձիք : Նա-  
խանձն է չարակամութեան զգացում առ-  
այնալիս որ մեղ աշխատակից են . ցանկու-  
թեան և չարախօսութեան հոգի է այն :  
Քրիստոնէական գործն անդամ ո՞րչափ տկար  
ասպար է սոյն ոչ-Քրիստոնէական զգացման  
հանդէպ : Եթէ չլինուինք մեծանձնութեան  
սոյն շնորհօք, ի՞նչ գործի ալ ձեռնարկենք,  
անլրէպ պիտի պատահինք նախանձու այս  
չար զգացման որ յոռեգոյնն է Քրիստոնէին  
հոգին մթագնուղ վատ զգացմանց : Միայն  
մէկ բանի պարտի Քրիստոնեայն ցանկալ,  
այն է՝ վեհ, սիրազեղ, աղնիւ հոգւոյ որ  
«նախանձիր» :

Եւ ապա, պղարտիք սորվիլ նաև ի՞նչ առ  
հունիւն, կնիք դնել ձեր շրթանց և մոռնալ  
ինչ որ ըրած էք ։ Բարիք դործելէ ետքը,  
այսինքն՝ երբ Սէրն յաշխարհն սպրդելով կա-  
տարած է իւր գեղեցիկ գործը, մեկուսացէք  
և մի խօսիք երբեք ձեր բարի գործին վրայ։  
Սէրն իրմէ խակ կը ծածկուի։ Սէրը կը մերժէ  
գոհունակութեան ղղացումն անդամ։ “Սէրը  
չգոռողանար, չնպարտանար։”

Գարմանալի է որ այս  
կամաց լաբունին է Զարմանալի է որ այս  
Նշանակուած է իրրեւ հինգերորդն այն տար-  
րերուն որ կը կազմեն գերադայն բարին է մաղա-  
քավարութիւնն է սիրոյ արտայայտութիւն ըն-  
կերպյին յարաբերութեանց մէջ, որիշ խօս-  
քով, Սէր ըստ կենցաղադիտութեան ։ Սէրը  
“անվայել վարմունք չունենար” ։ Բառած է  
թէ բարեկրթութիւնն է սէր ցուցնել նշն  
բաներու մէջ և քաղաքավարութիւնն է սէր  
ցուցնել փոքրիկ բաներու մէջ ։ Իսկ բարե-  
կրթութեան միակ գաղանիքն է սիրել ։ Սէրը  
անվայել վարմունք ունենալ ։ Կրնաք  
դնել ամենատղէտ անձ մը երեւելի մարդոց  
ընկերութեան մէջ, և եթէ նա ունի իւր  
սրտին մէջ Սէր, անվայել վարմունք չունե-  
նար ։ Զկրնար ունենալ այս է պարզ ճշմար-  
տութիւնը ։ Քարլայլ, խօսելով Ռոպըրթ Պըրնզի  
վրայ, ըսած է թէ երոպայի մէջ չկար ոք  
աւելի ազնուածք քան այդ հողագործ բա-  
նաստեղը Պըրնզի սայն աշխատութեան պատ-  
2

Ճառ այն էր որ կը սիրէր ամէն բան — մուկ, երիշուկ, և որ և իցէ բան, մեծ թէ փոքր, դոր Աստուած ստեղծած է : Ուստի չնորհիւ իւր այս պարզ անցագրին կընար մտնել ամէն ընկերութեան մէջ, կընար մտնել պաշտաներ և ապարաններ, թէպէտ իւր բնակութիւնն էր խոնարհ խրճիթ մը : Գիտէք գոռք «ազնուական», բառին նշանակութիւնը : Կը նշանակէ աղնիւ մարդ, մարդ՝ որ անուշութեամբ, սիրով կը գործէ : Ահա այդ է աղնուութեան բոլոր գաղտնիքը : Աղնիւ մարդն իրաց բնութենէն չկընար ընել անազնիւ գործ, անվայել գործ : Անազնիւ հոգւոյ, անհոգ, և անկարեկիր բնութեան տէր անձինք չեն կընար ուրիշ բան ընել, բայց եթէ անազնիւ և անվայել գործ : Սէրը «անվայել վարմունք չունենար» :

Անշահութբունէն : Սէրը «իրենը չփընտուեր», Ուշադիր եղէք . չմնտուեր զայն իսկ որ իւրն է : Կու գայ ժամանակ երը մարդ ի գործ կը գնէ իւր իրաւունքներէն հրաժարեալու բարձրագոյն իրաւունքը : Սակայն Սէրը կը մղէ զմեզ երբեք չփնտուել մեր իրաւունքները, կը մղէ զմեզ անդիտանալ զանոնք, և անձնական տարրը բոլորովին չնջել մեր հաշիներէն : Դժուար չէ զոհել մեր իրաւունքները, քանզի շատ անդամ արտաքին են : Դժուար բանն է ուրանալ զմեզ, իսկ դժուարագոյնն է ոչինչ փնտուել մեր անձանց համար»

Երբ փնտուած, գնած և արժանաւորութեամբ ստացած ենք որ և իցէ բան, արդէն իսկ երապէս վայելած ենք այն բանին սերը, պատուականագոյն մասը : Ուստի թերեւս մեծ սխալ չէ զոհել զայն : Սակայն բնաւ բան մը չփնտուել մեզ համար, օտարին և ոչ մեր անձանց օգուտը նկատել, ահա այդ է դժուարին գործը : «Դուն քեզի մեծ բանե՞ր կը փնտուես, » ըստ մարդարէն . «մի փնտուեր» : Ինչո՞ւ : Վասն զի չկայ մեծութիւն էրոց : Իրեւը չեն կընար մեծ ըլլալ : Միակ մեծութիւնն է անշահախնդիր, անձնուրաց սէր : Անձնուրաց որ կը վատնուի անձնուրացութեամբ՝ յայնժամ միայն կ'ըլլաց ուղիղ կամ արդարանալի, երբ շարժառիթն է մեծ նպատակ կամ աւելի մեծ սէր : Ըսի թէ աւելի դժուարին է չփնտուել մեր անձանց օգուտը քան փնտուելէ ետքը զոհականին : Այս խօսքս ետ պիտի առնեմ : Այս ճշմարիտ է այն անձին նկատմամբ միայն որ իւր օգուտը կը փնտուէ ըստ մասին : Սիրոյ համար չկայ ծանր բան, դժուարին բան : Կը հաւատամ թէ քաղցր է Քրիստոսի լուծը : Այս լուծն է այն կերպը որով ապրեցաւ Քրիստոս եւ կը հաւատամ թէ այն է քաղցրագոյն կերպ, երջանկագոյն կերպը : Քրիստոսի խօսքեպը, երջանկագոյն կերպը : Քրիստոսի խօսքը մէջ ամենէն որոշ դասը ոս է թէ երջանելուն մէջ ամենէն որոշ դասը ոս է թէ երջանելունը չկայանար բան մը ունենալու կամ կութիւնը չկայանար բան մը ունենալու կամ ստանալու մէջ, այլ տալու մէջ : Նա ըստաւ,

“Աւելի երանելի է տակը քան առնելը”, (Գործ. ի. 35): Աշխարհի կէսը սխալ ճանապարհի կը հետեւի երջանկութեան համենելու համար: Կը կարծեն թէ այն կը կայանայ ունենալու և ստանալու մէջ և ուրիշներէ ծառայութիւն ընդունելու մէջ: Ոչ, այն կը կայանայ ուրիշներու տալու, ուրիշներու ծառայելու մէջ: “Զեղս մէ ով որ մեծ ըլլալ կ'ուզէ, թող անիկա ձեր սպասառը ըլլայ, ” ըսաւ Քրիստոս: Ով որ կ'ուզէ երջանիկ ըլլալ, թող յիշէ թէ միայն մէկ ճանապարհ կայ, այսինքն՝ աւելի երանելի, աւելի երջանիկ բան, է տալ քան առնել:

Հեռացաւութեան մէջ: “Սէրը բարկութեան չդըրդրութիւր: ” Սիրոյ այս յատկութեան յիշատակումը հոս շատ ուշագրաւ է: Մենք հակամէտ ենք նկատել դիւրագրգութիւնն իրերեւ յոյժ անվնաս տկարութիւն: Կը կոչենք զայն կազմային պարզ տկարութիւն, ժառանգական թերութիւն, և այնչափ լուրջ կարեւորութիւն չենք ընծայեր անոր՝ երբ կը խօսինք մարդու մը նկարագրին վրայ: Ի վերայ այսր ամենայնի, ահաւասիկ սիրոյ այս վերլուծման մէջ կեդրոնական տեղ կը դրաւէ այն. և Աստուածաշոնչը շատ անդամ կը դատապարտէ զայն իրեւ մին այն վնասակարագոյն բաներէն որ կը դտնուին մարդկային բնութեան մէջ:

Ցասկոտութիւնն է ընդհանրապէս առաքինի անձանց մոլութիւնը: Այն է շատ անդամ

ազնիւ անձանց նկարագրին միակ արաւուզ կը ճանշնաք այրեր և կիներ որ գրեթէ կատարեալ են, կամ որ բոլորովին կատարեալ պիտի ըլլային, եթէ միայն չունենային դիւրաբորբաք, դիւրագրդիու կամ ցամկոտ բնութիւն: Բարոյական ընտիր նկարագրի հետցամկոտութեան այս միաբանութիւնը մին է բարոյագիտութեան ամենէն տարօրինակ և ամենէն ցաւալի խնդիրներէն: Իրողութիւնը սա է թէ մեղաց երկու մեծ դասակարգեր կան— Տարթոյ մեղք և Խառնուածոյ մեղք: Անառակ Որդուն մեղքն է առաջին դասակարգէն, իսկ երէց Որդունը՝ երկրորդ դասակարգէն: Այդ, մարդիկ տարակոյս չունին թէ այս երկու կարգ մեղաց ո՛րն է յոռեգոյնը: Առ հասարակ, առանց որ և լիցէ վիճարանութեան, կը դատապարտեն Անառակ Որդին առաւելապէս: Սակայն իրաւոնք ունին Չունինք կշռորդ որով կարենանք կշռել իրարու մեղքերը: “Կոչտ” և “Անուրբ” լոկ մարդկային բառեր են: Բարձրագոյն բնութեան վերաբերեալ թերութիւնք կրնան նուազ ներելի ըլլալ քան ստորին բնութեան վերաբերեալ թերութիւնք, և յաչս այն իշկին որ Սէր է՝ սիրոյ դէմ գործուած մեղքը կը թուի թերեւս հարիւրապատիկ ծանր կամ ստորին: Ոչ մի մոլութիւն, ոչ աշխարհասիրութիւն, կարող ընչասիրութիւն, ոչ իսկ արբեցութիւն, կարող է այնպէս արգելք ըլլալ մարդոց ճշմարիտ

Քրիստոնեայ ըլլալուն որպէս չար բնաւորութիւնը կեանքը դառնացունելու, հասարակութիւններ պառակտելու, ամենէն նուիրական յարաբերութիւններ խղելու, ընտանիքներ կործանելու, այրեր և կիներ թարշամեցունելու, միով բանիւ, ձրի թշուառութիւն յառաջբերելու համար, եղական զօրութիւն ունի այն: Նայեցէք Անառակ Որդուցն Երէց Եղբօր, բարոյականի տէր, աշխատասէր, համբերող, պարտաճանաչ Եղբօր—իւր առաքինութեանց համար ամէն պատույ արժանի այն Եղբօր— Նայեցէք դարձեալ նոյն Եղբօր մինչ, իբրեւ մեծ մանուկ, խոժոռադէմ կը գեղերի իւր հօր տան դրան շուրջ: Կը կարդանք թէ “Բարկացաւ ու չէր ուղեր ներս մտնել:” Խորհեցէք թէ իւր այս ընթացքն ի՞նչ աղդեցութիւն դորձեց իւր հօր վրայ, տան ծառայից վրայ, և հրաւիրելոց Երջանկութեան վրայ: Խորհեցէք թէ ի՞նչ աղդեցութիւն դորձեց Անառակին վրայ, և քանի՞ քանի անառակներ կ'արդելուին մտնելէ Աստուծոյ թագաւորութիւնը խրտուցիչ բնաւորութեամբն այնպիսեաց որ կ'ըսեն թէ են այն թագաւորութեան մէջ: Լուծեցէք, իբրեւ բարուց ուսումնասիրութիւն, այն խոժոռութիւնը, որ կը մժագնէ Երէց Որդուցն դէմքը: Ի՞նչ բանէ կը կազմուի: Նախանձ, բարկութիւն, հպարտութիւն, ատելութիւն, անդժութիւն, իւր անձին արդարութեան վրայ համարում, դիւրադրդուու-

թիւն, դառնութիւն, քէն—ահաւասիկ տարերքը որ կը կազմեն այդ տեղ և անսէր հոգին: Ինչ ինչ փոփոխութեամբք, այս տարերք կը կազմեն նաև ամէն ցասկոտ բնաւորութիւն: Դուք դատեցէք թէ յոռեգոյն չէ՞ մնալ խառնուածային այսպիսի մեղաց մէջ քան մարմնական մեղաց մէջ, և թէ այլոց յոռեգոյն չէ՞ կենակցիւ այնպիսեաց հետ որ կը դորձեն խառնուածային մեղքեր քան այնպիսեաց հետ որ կը դորձեն մարմնական մեղքեր: Ոչ ապաքէն ինքն Քրիստոս պատասխանեց այս հարցման երբ ըսաւ, “Ճշմարիտ կ'ըսեմ ձեզի որ մաքսաւորները ու պոռնիկները ձեզմէ առաջ կը մոնեն Աստուծոյ թագաւորութիւնը:” Երկնից մէջ իրօք չկայ տեղ ցասկոտ անձանց համար: Եթէ այսպիսի ոք մտնէր հոն, բոլոր հոն բնակեալք թշուառ պիտի ըլլային անվիշտ: Ուստի այսպիսին, եթէ չծնի վերըստին, չկրնար, պարզապէս անհարութ, մտնել Աստուծոյ թագաւորութիւնը: Վասն զի կատարելապէս ստոյգ է թէ պարտի մարդ նախ իւր սրտին մէջ ընդունիլ Աստուծոյ թագաւորութիւնը որպէս զի ինքն ընդունուի նոյն թագաւորութեան մէջ:

Արդ կը հասկնաք թէ ինչո՞ւ մեծ կարեւորութիւն ունի դիւրագրգռութիւնը: կարեւոր է ոչ իւր բնութեանը համար, այլ՝ հոգւոյն համար զոր ի յայտ կը բերէ: Ճիշդ այդպատճառաւ կը համարձակնեք դատապարտել:

դայն անսառվոր խատութեամբ։ Դիւրագրգռուա-  
թիւնը փորձ է սիրոյ, յայտարար նշան է ներ-  
քին չփրող բնութեան։ Բնդհատ ջերմ է որ  
ի վեր կը հանէ ներքին անընդհատ ախտ մը,  
ջուրերու վրայ մերթ ընտ մերթ ի տես եկող  
պղպջակ է որ կը ցուցնէ թէ նեխութիւն կայ  
յատակը, օրինակ է հոգւոյն ամենէն ծածուկ  
արտագրութեանց որ յակամայս դուրս կը  
ժայթքեն անզգուշութեան վայրիեաններու մէջ։  
համառօտիւ, բորբոքումն է հարիւրաւոր պըժ-  
դալի և Քրիստոնէի անվայել մեղաց։ Վասն  
զի համբերութեան պակաս, քաղցրութեան  
պակաս, մեծանձնութեան պակաս, քաղա-  
քակարութեան պակաս, անշահախնդրութեան  
պակաս, համանդամայն յերկան կու դան ցաս-  
կոսութեան մէկ վայրկենի մէջ։

Հետեւապէս բաւական չէ խօսիլ բարկու-  
թեան վրայ միայն։ Պարտիմք դիմել բուն աղ-  
բիւրը և փոխել ներքին բնութիւնը։ յայնժամ  
ցասկոտութեան հակամիտութիւններն ինքնին  
կ'անհետանան։ Հոդիները կը քաղցրանան ոչ  
թէ հանելով անոնց թթու հեղուկները, այլ  
դներով անոնց մէջ առատ Աէր, նոր Հոդի,  
Հոդին Քրիստոսի։ Քրիստոս, կամ Քրիստոսի  
Հոդին, երբ կը թափանցէ մեր հոդին, կը  
քաղցրացունէ, կը մաքրէ և կը փոխակերպէ  
ամէն բան։ Այս միայն կարող է արմատաքի  
խլել ինչ որ ուղիղ չէ ի մեղ, նորոգել և վե-  
րլատին ծնուցանել զմեղ, և վերահաստատել

ներքին մարդը իւր նախկին մաքուր վիճակին  
մէջ։ կամաց զօրութիւնը չփոխեր զմարդիկ,  
ժամանակը չփոխեր զմարդիկ։ բայց Քրիս-  
տոս կը փոխէ ։ Ուստի «ձեզմէ ամէն մէկը  
թող նոյն միտքը ունենայ, որ Քրիստոս Յի-  
սուսի մէջն էր»։ Մենէ ոմանք չունին կորսըն-  
ցունելու շատ ժամանակ։ Միանգամ եւս յի-  
շեցէք թէ կենաց և մահու խնդիր է այս։ «Ով  
որ գայթակեցընէ աս պղտիկներուն մէկը  
որ ինձի կը հաւատան, աղէկ է անոր՝ որ իր  
պարանոցին իշու աղացքի քար մը կախուի,  
ու ծովուն անզունդին մէջ ընկղմի։», Ուրիշ  
խօսքով, Յիսուս Քրիստոս լրջօրէն կը վճռէ թէ  
աւելի լաւ է չապրիլ քան չսիրել։ Ա-է-ն ւ-  
է լուրէւ ուն չերեւ։

Անհնդունիւն և անհնդունիւն ։ Այս առաքի-  
նութեանց վրայ մեր ըսելիքը կրնանք յայտ-  
նել գրեթէ մէկ խօսքով։ կասկածու անձանց  
համար աննենդութիւնն է առաքինութեանց  
գլխաւորը։ Անձնական ազգեցութեան մեծ  
գաղտնիքն է ունենալ այդ առաքինութիւնը։  
Եթէ խօրհիք պահ մը, պիտի գտնէք թէ  
ձեզ ազդող մարդիկն են այնպիսիք որ կը  
վստահին ձեզ։ կասկածանաց մթնոլորտի մէջ  
մարդիկ կը կարկամին, բայց վստահութեան  
մթնոլորտի մէջ կընդլայնին։ Զարմանալի է  
որ այս կարծրասիրտ և անկարեկիր աշխարհի  
մէջ աստ և անդ կը մնան դեռ քանի մը  
չքնաղ հոգիներ որ չարութիւն չեն խորհիք։

Ահա այս է ինչ որ կը կոչուի այս աշխարհէս չըլլալ։ Սէրը “չարութիւն չխորհիր”, “ չար շարժաւիթ չընծայեր, իրաց պայծառ կողմը կը տեսնէ, և ամէն գործի կու տայ լաւագոյն մեկնութիւնը։ Մտաց որպիսի՞ բերկրառիթ տրամադրութիւն է այս։ Որպիսի՞ դրդիու և օրհնութիւն է մէկ օր իսկ գտնել այդպիսի վիճակ։ Վատահութեան արժանանալ՝ փըրկուիլ է։ Եւ եթէ փորձենք ազդել ուրիշներու կամ աղնուացունել ուրիշներ, պիտի տեսնենք շուտով թէ պիտի յաջողինք այնչափ միայն որչափ անոնք կը վատահին թէ մենք կը վատահինք իրենց վասն դի ուրիշին յարդանքն է առաջին բանը որով կը վերստանայ ոք առ անձն իւր այն յարդանքը զոր կորուսած էր։ Համարումը զոր ունինք իւր վրայ՝ կը ներշնչէ զնա յուտով և կը ծառայէ իրեւ տեսլական այն վիճակին և կարելիութեանց որոց կրնայ հասնիլ։

“Սէրը անիրաւութեան վրայ չինդար, հապա ճշմարտութեան խնդակից կ'ըլլայ։” Այս է անկեղծութեան բնութիւնը։ Այն որ Սէր ունի՛ կը սիրէ ճշմարտութիւնը ոչ նուազ քան կը սիրէ զմարդիկ։ Կ'ուրախանայ ճշմարտութեան համար։ Ծուրախանար այն իրաց համար որոց հաւատատալ սորված է, չուրախանար այս կամ այն եկեղեցւոյն վարդապետութեան համար, այլ կ'ուրախանայ Ճշմարտութեան համար։ Կ'ընդունի միայն ինչ ոք իրական է,

կ'որոնէ եղելութիւններ, կը վնասուէ Ճշմարտութիւններ և անկողմակալ մտօք։ Այսպիսին գիտէ կառավարել իւր անձը և չփորձներ օգտուիլ ուրիշներուն թերութիւններէն։ մարդասէր է և չճճուիր յերեւան հանելով ուրիշներուն տկարութիւնը, այլ ամէն յանցաները կը ծածկէ։” անկեղծ նպատակի տէր է և կ'աշխատի տեսնել իրերն ինչպէս են իսկապէս, և կ'ուրախանայ երբ կը գտնէ զայն լաւագոյն քան զոր այլք կը համարին։ Այսչափ խօսք բաւական է Սիրոյ վրայ։ Արդ մեր կենաց կոչումն է այս առաջինութիւններն ընել մասն մեր նկարագրին։ Այդէ գերագոյն գործը որուն պարտիմք նուիրել մեր ջանիքը և ուշադրութիւնն այս աշխարհի մէջ, այսինքն՝ օրեւ սորվիլ։ Այս կեանքը լի չէ սիրել սորվելու պատեհութիւններով։ Ամէն այր և կին ամէն օր ունի այդպիսի հազարաւոր պատեհութիւններ։ Աշխարհ զբօսարան չէ, այլ՝ դպրոց։ Կեանքը զուարծութեան ժամանակ չէ, այլ՝ կրթութեան։ Մեզ ամենուս համար յաւիտենական դասն է սա։ Ի՞նչպէս ի՞նանկ առելք էրէւլ։ Ի՞նչպէս կ'ըլլայ մարդարտար որ և է խաղի մէջ։ Վարժութեամբ։ Ի՞նչպէս կ'ըլլայ մարդ քաջ արուեստագէտ, քաջ երաժիշտ։ Վարժութեամբ։ Ի՞նչպէս կ'ըլլայ ոք քաջ երգուագէտ, քաջ սղագիր։ Վարժութեամբ։ Ի՞նչպէս կ'ըլլայ ոք բարի մարդ։ Վարժութեամբ.

և միայն վարժութեամբ : Մարմնոյ և մտաց զարդացման և յառաջդիմութեան ծառայող միջոյները տարրեր չեն այն միջոյներէն որք կը նպաստեն հոգւոյն զարդացման : Եթէ ոք չդորձածէ իւր բազուկը, չզօրացուներ իւր բաղկի մկանները . եթէ ոք չդորձածէ իւր հոգեկան կարողութիւնները, չունենար զուտ հոգի, զօրաւոր նկարագիր, կորովի բարոյական, և գեղեցիկ աճում հոգեւոր : Սէրը չէ վաղանցուկ, խանդավառ յուղում : Սէրն է ճոխ, ուժգին, կորովի արտայայտութիւն Քրիստոնէալվացել բոլոր յատկութեանց, այս ինքն՝ Քրիստոսի յատուկ բնութեան, իւր ամբողջական զարդացման մէջ : Եւ այն յատկութիւնք որք կը կազմեն այսպիսի վաեմ նը կարաղիր՝ կը ստացուին միայն անդուլ վարժութեամբ :

Ի՞նչ կ'ընէր Քրիստոս հիւսին խանութին մէջ : Վարժութիւն : Թէպէտ կատարեալ էր նա, կը կարդանք թէ և ուրիշը հնազանդութիւն, “Եւ լորտեանք իմաստութիւնով, և Աստուծմէ ու մարդոցմէ շնորհք գտնելով” : Մի դժուարէ ուրեմն վիճակին համար զոր ունիք այս կենաց մէջ : Մի գանդատիք այս կենաց անվերջանալի հոգերէն, անձուկ միջաւ վայրէն և նեղացուցիչ բաներէն : Մանաւանդ մի բարկանաք փորձութեան, մի շփոթիք տեսներով թէ այն կարծես կը ստատկանայ հետզիւտէ և չդադրիր հակառակ ձեր ջանից, հա-

կառակ ձեր տառապանաց և աղօթից : Այդէ վարժութիւնը զոր Աստուած սահմանած է ձեղ և ահա իւր դործը կը կատարէ համբերով, խոնարհ, առատասիրտ, անշահամիւնդիր, քաղցրաբարոյ և քաղաքավար ընելով զձեղ : Մի քրթմնջէք այն ձեռքին դէմ որ ահա կը ձեւակերպէ ձեր ներքին, տակաւին անձեւ, պատկերը : Թէպէտ չէք տեսներ դոք, այդ պատկերն հետզհետէ կը գեղեցկանայ, և մէն մի փորձութիւն կը նպաստէ անոր կատարելազործման : Ուստի մի առանձնանաք : Գտնուեցէք մարդոց, իրաց, նեղութեանց, դժուարութեամց և արգելքներու մէջ : Կը յիշէք թէ կէօթէ ըսած է, Տաղանդը կը զարգանայ առանձնութեան մէջ, նկարագիրը կենաց պայքարին մէջ : Առանձնութեան մէջ կը զարդանայ տաղանդը — աղօթից, հաւատոյ, խորհրդածութեան և անտեսանելին տեսնելու տաղանդը : Նկարագիրը կը զարգանայ կենաց պայքարին մէջ : մարդիկ դմսաւորապէս հօն պիտի սորվին սիրել :

Ի՞նչպէս պիտի սորվին : Այս է այժմ խնդիրը : Արդէն յիշեցինք սիրոյ տարրերէն զումանս, բայց տարրեր միայն : Բուն Սէրը չկրնար երբեք բացատրուիլ : Լոյսն է աւելի ինչ քան իւր տարրեց գումարը — փայլուն, շողողուն, թոթուուն եթեր : Նոյնպէս Սէրն է աւելի ինչ քան իւր տարրեց ամբողջութիւնը — բարախուն, շարժուն, զգայուն,

կենդանի բան մը : Բոլոր գոյներն ի մի բաշ  
զադրելով մարդիկ կարող են սպիտակութիւն  
յառաջ ըերել, բայց չեն կարող լոյս յօրինել:  
Բոլոր առաքինութիւններն ի մի ըերելով մար-  
դիկ կարող են յօրինել առաքինութիւն,  
բայց չեն կարող սէր յօրինել : Ի՞նչպէս ու-  
րեմն պիտի ընդունինք մեր հոգւոց մէջ այս  
կենդանի սէրը որ ի վեր է քան առաքինու-  
թիւնները : Կը զօրացունենք մեր կամքը որպէս  
զի ձեռք բերենք զայն : Կը ջանանք նմանիլ ա-  
նոնց որ ունին զայն : Կամոններ կը հաստա-  
տենք այդ նպատակաւ : Արթուն կը կենանք  
և կ'աղօթենք : Մակայն այս բաները առան-  
ձինն պիտի չդնեն Սէր մեր բնութեան մէջ:  
Սէրն արդիւն+ է : Ուստի ուղիղ պայմանը կա-  
տարելով միայն կրնանք ստանալ արդիւնքը :  
Արդ ի՞նչ է պայմանը կամ ո՞ւստի՞ւնուս :

Եթէ բանագը Ա. Յովհէ. Դ. 19 համարը,  
պիտի կարդաք սա խօսքը. «Մենք զանիկա  
կը սիրենք, ինչու որ առաջ անիկա մեղ սի-  
րեց :» «Ինչու որ» բառին նայեցէք. այդ  
կը ցուցնէ պատճառը զոր կ'ուղենք դանել :“Ինչու ո՞ւ առաջ անիկա մեղ սիրեց :» Հետե-  
ւապէս մենք կը սիրենք, կը սիրենք զնա և  
բոլոր մարդիկ : Անհնար է մեղ չսիրել : Կը  
սիրենք, կը սիրենք ամէն մարդ, վասն զի Նա  
սիրեց մեզ : Մեր սիրաը տակաւ առ տակաւ  
կը փոխուի : Մտածեցէք Քրիստոսի սիրոյն  
վրայ, և ահա պիտի սկսիք սիրել : Զեր վա-

րուց եւ բարուց մէջ ցոլացուցէք Քրիստոսի  
նկարագիրը և ահա նոյն պատկերին պիտի  
փոխուիք տակաւ առ տակաւ։ Ուրիշ ճանա-  
պարհ չկայ։ Զէք կրնար սիրել ըստ հրամա-  
նի, կամ յանձնարարութեամբ։ Կրնաք միայն  
նայիլ սիրուն առարկային, սիրել զայն և տա-  
կաւ նմանիլ այնմ։ Նոյնպէս նայեցէք այս կա-  
տարեալ Նկարագրին, այս կատարեալ կեան-  
քին։ Նայեցէք մեծ Պատարագին զրո մատոյց  
իւր բոլանդակ կենայ մէջ և խաչին վրայ ի  
գողդոթա . և յայնժամ պիտի սիրէք զնա։  
Եւ սիրելով զնա՝ պիտի ըլլաք անոր նման։  
Ծէրը սէր կը ծնանի։ Դրէք ելեկտրականա-  
ցեալ մարմնոյ մը առջեւ կտոր մը երկաթ,  
և ահա այդ երկաթը կ'ելեկտրականանայ բա-  
ւական ժամանակ։ Կը փոխուի առժամանակ-  
եայ մագնետի մնայուն մագնետի առջեւ դըր-  
ուելով միայն, և ցորչափ ժամանակ իրարու-  
քով պահէք զայնա՝ երկուքն ալ կ'ըլլան ե-  
լեկտրականութեան տէր։ Մնացէք անոր քով  
որ զմեզ սիրեց և իւր անձը տուաւ մեզ հա-  
մար, յայնժամ պիտի ստանաք մնայուն զօրու-  
թիւն ձգողութեան, և անոր նման առ ձեզ  
պիտի գրաւէք ամէն մարդ, և անոր նման  
պիտի սիրէք ամէն մարդ։ Այդ է սիրոյ ան-  
խուսափելի արդիւնքը։ Ամէն մարդ որ կը կա-  
տարէ պայմանը կամ ունի այն պատճառը, կը  
ստանայ նաեւ արդիւնքը։ Գանացէք թողու-  
սա դաղափառը թէ կրօնասէր կ'ըլլանք դիպ-

ուածաւ, կամ անխմանալի և անակնկալ եղանակաւ։ Ոչ կրօնասէր կ'ըլլանք բնական օրէնքով, կամ գերբնական օրէնքով, վասն զի ամէն օրէնք աստուածային է։ Նշանաւոր քարողիչ մը անդամ մը գնաց տեսմնել մահամերձ տղայ մը, և երբ մտաւ սենեակը՝ դրաւ իւր ձեռքը հիւանդին զլխուն վրայ և ըսաւ միսյն, «Զաւակս, Աստուած կը սիրէ զքեզ,» և մեկնեցաւ։ Ցղան յայնժամ ցատկեց իւր անկողնէն և գոչեց տան մէջ գտնուած անձանց, «Աստուած կը սիրէ զիս, Աստուած կը սիրէ զիս։» Փօխուեցաւ տղան։ Իւր սա զգացումը թէ ինք սիրելի է, յաղթահարեց և սիրով լցուց զնա, և սկսաւ նոր սիրու ստեղծել անոր մէջ։ Աստուծոյ սէրն այսպէս կը կակլացունէ մարդուն քար սիրու և վերասին ծննդեան միջոցաւ կ'ընէ զնա նոր ստեղծուած, — Համբերող, խոնարհ, հեղ, անձնուրաց։ Ուրիշ կերպով կարելի չէ համնիլ այս վիճակին։ Կը տեսնէք թէ գաղտնիք չկայ բնաւ։ Կը սիրենք ուրիշները, կը սիրենք ամէն մարդ, կը սիրենք մեր թշնամիները, վասն զի նախ նա սիրեց զմեղ։

### ԶԱՏԱԳՈՎՈՒԹԻՒՆ

Քանի մը խօսքով եւս ցուցնենք թէ ինչո՞ւ Պօղոս կ'ըսէ թէ սէր է զերագոյն ստացուածը։ Պատճառն է յոյժ նշանաւոր։ միով բանիւ, սա է թէ սէրը և ունէ, մնայուն է։

«Սէրը,» կ'ըսէ Պօղոս, «բնաւ չիյնար։» Ապա դարձեալ կը սկսի յայնժամու մեծամեծ իրաց իւր սքանչելի ցուցակներէն մին, և մի առ մի կը քննէ զանոնք։ Կը քննէ այն իրերը զորս մարդիկ տեւական կը կարծէին, և կը ցուցնէ թէ ամէնքն անցաւոր, վաղանցուկ, ժամանակաւոր են։

«Թէ որ մարդարէութիւններ ըլլան՝ պիտի խափանին։» Մայրեր կը փափաքէին յայնժամ որ իրենց որդիք մարդարէ ըլլային։ Դարերէ հետէ Աստուած երբեք չէր խօսած մարդարէի բերնով, և այն ժամանակ մարդարէն աւելի մեծ էր քան թագաւորը։ Մարդիկ անձկաւ կը սպասէին ուրիշ դեսպանի, և, երբ կու գար, կ'անսային անոր ձայնին իբրեւ Աստուծոյ ձայնին։ Պօղոս կ'ըսէ, «Թէ որ մարդարէութիւններ ըլլան՝ պիտի խափանին։» Աստուածաշունը լի է մարդարէութիւններով։ Եւ այս մարդարէութիւնք մի առ մի խափանեալ են, այսինքն՝ կատարուած են, ուստի և վերջացած է անոնց գործը։ Աշխարհի մէջ այլ եւս ուրիշ բանի չեն ծառայեր, բայց միայն մնուցանել բարեպաշտ անձանց հաւատքը։

Ապա կը խօսի Պօղոս լեզուներու վրայ։ Լեզուք եւս մեծապէս փափաքելի էին։ «Թէ որ լեզուներ՝ պիտի գագարին։» Ամենուս յայտնի է թէ զարեր, բազում գարեր, անցած են յորմէ հետէ տեսմուեցաւ այդ հրաշալի պարդեւը։ Այժմ գաղարած է։ ի՞նչ

իմաստ կ'ուղէք՝ ընծայեցէք այս խօսքին. դա-  
դարած է և ելմէ կ'ուղէք, հասկցէք, օրինա-  
կի աղաղաւ, լեզուներն առ հասարակ։ Այդ  
չէր անշուշտ Պօղոսի միտքը. սակայն թէպէտ  
չպարզեր մեր մասնաւոր դասը, կը ցուցնէ  
մեղ ընդհանուր ճշմարտութիւնը։ Առէք հին  
Յունաբէն լեզուն որով գրուեցան թուղթերն  
առ կորնթացին. չխօսուիր։ Առէք Լատինե-  
րէնը, յայնժամու միւս մեծ լեզուն. դադա-  
րած է ի վաղուց հետէ։ Նայեցէք Հնդիկ լեզ-  
ուին. սկսած է դադարիկ։ Կալէսի, իուլան-  
տայի, Սկովտիոյ բարձանց լեզուն սկսած է  
մեռնիլ մեր իսկ աչաց առջեւ։

Ապա Պօղոս աւելի յառաջ կ'երթայ և կը  
յարէ մեծագոյն համարձակութեամբ, “Թէ որ  
գիտութիւն՝ պիտի խափանի։” Ո՞ւր է նախ-  
նեաց իմաստութիւնը։ Խափանած է բոլորո-  
վին։ Այսօր դպրոցական աշակերտն իսկ ա-  
ւելի բան գիտէ քան խահամիկ նեւունն։ Խա-  
փանած է Անդղիայի այն գիտնականին գի-  
տութիւնը։ Երեկի լրագիրը կ'այրէք դուք,  
վասն զի խափանած է իւր գիտութիւնը։ Մեծ  
համայնագիտակներու հին հրատարակութիւն-  
ները կը գնէք քանի մը դահեկանի, վասն զի  
խափանած է անոնց գիտութիւնը։ Տեսէք  
ի՞նչպէս չոգւոյ կիրառութիւնն յաջորդեց սուր-  
հանդակի կառաց, ի՞նչպէս ելեքտրականու-  
թիւնն յաջորդեց շոգւոյ կիրառութեան և մո-  
ռացութեան մատնեց հարիւրաւոր գրեթէ նոր

գիտութեր։ Այժմու գիտնոց մին, Սըր Ռեկլերմ  
թումարն, ըստ ոչ շատ կանուխ թէ “Յետ  
սակաւուց պիտի չգործածուի շոգեշարժ մե-  
քենայ։” “Թէ որ գիտութիւն՝ պիտի խափա-  
նի։” Ամէն գործարանի ետեւի կողմը կը գրո-  
նէք հին երկաթի կոյտ մը, քանի մը անիւ,  
լծակ եւ այլն, կոտրած և ժանդոտած։ Քան  
տարի առաջ այդ բաները քաղաքին պար-  
ծանին էին։ Մարդիկ խումբ առ խումբ կու-  
գային գիւղերէն տեսնել մեծ գիտը քաղա-  
քին մէջ. հիմա անցած է անոր ժամանակը։  
Նոյնպէս պիտի հիննան, յետ սակաւուց, այժ-  
մու բոլոր պանծալի գիտութիւնը և վիկիտ-  
փայութիւնը։ Տակաւին երէկ, իտինպուրկի  
համարանին ուսուցչական ժողովին մէջ, մե-  
ծագոյն տեղը կը գրաւէր Սըր Ճէյմս Սիմֆոնին,  
+լորֆորմի գտիչը։ Վերջերս նոյն համարանի  
գրատան պետը խնդրեց ֆրոֆ. Սիմֆոնինէ,  
որ է յիշեալ Ճէյմս Սիմֆոնի յաջորդը և եղ-  
բօրորդին, երթալ գրատուն և զատել իւր  
մամագիտութեան վրայ ճառող հին և անպէտ  
գիրեթերը։ Գրատան պետն յայնժամ ընդու-  
նեց սա պատասխանը։ “Ժողովէ ամէն գա-  
սագիրք որ տպուած է աւելի քան տասը տա-  
րի առաջ և գիր մառանը։” Սըր Ճէյմս Սիմֆ-  
ոնին մեծ հեղինակութիւն էր քանի մը տարի  
առաջ։ Մարդիկ երկրի ամէն կողմէն կու գա-  
յին խորհրդակցիլ անոր հետ, և յայնժամու-  
թիւթէ բոլոր գիտութիւնը մոռացութեան

մատնուած է այժմու գիտութեամբ ։ Նոյնը  
ճշմարիտ է գիտութեան ամէն ճիւղի մասին։  
Հիմա “շատէն քիչը գիտենք”, “որպէս թէ  
հայեցի մէջ կը տեսնենք անյայտ կերպով”։

Կրնա՞ը յիշել ինձ բան մը որ պիտի տեւէ։  
Շատ բաներ Պօղոս չղիջաւ յիշել։ Զյիշեց  
դրամ, բաղդ, համբաւ։ այլ զատնեց իւր ժա-  
մանակի մեծ բաները, այն բաները՝ զորս մար-  
դիկ կարեւոր կը համարէին, և փոխանակի  
մերժեց զայն իրեւ անկարեւոր իրեր։ Պօ-  
ղոս հակառակ չէր այդ բաներուն ի մասնա-  
ւորի։ ինչ որ ըստ անոնց համար՝ սա էր թէ  
տեւական չեն։ Մեծ բաներ են, բայց ոչ գե-  
րադոյն բաներ։ կան աւելի մեծ բաներ։ Մեր  
խկական նկարագիրը շատ աւելի կարեւոր է  
քան մեր դործը, քան մեր ինչքը։ Շատ բա-  
ներ զորս մարդիկ կը դատապարտեն իրեւ  
մեղք՝ չեն մեղք, բայց անցաւոր են։ Եւ այս  
է նոր կտակարանի սիրական մէկ ձեռնար-  
կութիւնը։ Յովիշաննէս աշխարհի վրայ խօսե-  
լով չըսեր թէ անիրաւ է այն, այլ կ'ըսէ թէ  
“կ'անցնի”։ Աշխարհի մէջ շատ բան կայ որ  
հաճոյական և գեղեցիկ է, շատ բան կայ որ  
մեծ և գրաւիչ է, բայց պիտի չնայ։ “Ամէն  
բան որ աշխարհի մէջ է, մարմնոյ ցանկու-  
թիւնը ու աչաց ցանկութիւնը, և աս կեսն-  
քիս ամբարտաւանութիւնը”, կարճ ժամանակի  
համար են։ Ուստի մի սիրէք աշխարհը։ Չու-  
նի բան մը որուն նուիրէ անմահ հոգին իւր

կեանքը և զօրութիւնը։ Անմահ հոգին պար-  
տի նուիրել զինքն անմահ բանի ։ Եւ ան-  
մահ բաներն են “հաւատք, յոյս, սէր՝ աս եւ  
ըեքը” միայն, “ու ասոնց մեծագոյնը սէրն է”։

Բատ ոմանց, պիտի գայ ժամանակ յո-  
րում պիտի անցնեին նաեւ այս երեք բանե-  
րէն երկուքը — հաւատքը՝ փոխուելով տեսու-  
թեան, յոյսը՝ լրման։ Այդպէս չըսեր Պօղոս։  
Շատ քիչ բան գիտենք հիմա հանդերձեալ կե-  
նաց վիճակներուն վրայ։ Բայց ինչ որ ստոյդ է  
սա է թէ Սէրը պիտի չանցնի։ Սատուած, Յա-  
ւիտենականն Աստուած, Սէր է։ Ցանկացեք  
ուրեմն այդ յաւիտենական պարզեւին, այդ-  
միակ պարզեւին որ ստոյդ է թէ պիտի մնայ,  
այդ միակ գրամին որ ի շրջաբերութեան պիտի  
մնայ տիեզերաց մէջ, երբ աշխարհի բոլոր  
աղգաց բոլոր ուրիշ դրամք անօգուտ և ան-  
պատիւ ըլլան։ Ձեր անձերը շատ բաներու  
պիտի տաք դուք, տուէք նախ Սէրոյ։ Ճանչ-  
ցէք իրաց համեմատական յարդը և ըստ  
այնմ շարժեցէք։ Թող մեր կենաց առաջին մեծ  
նպատակն ըլլայ գէլժ ձեռք բերել սոյն տետ-  
րակին մէջ պաշտպանուած նկարագիրը, նկա-  
րագիրը՝ որ Քրիստոսինն է, և որ շնուած է  
Սէրոյ վրայ։

Ըսինք թէ Սէրը յաւիտենական է։ Դի-  
տա՞ծ էք երբեք թէ Յովիշաննէս ո՛րչափ ստէպ  
կը կցորդէ սէրը և հաւատքը յաւիտենական  
կենաց հետ։ Իբր երեսուն տարի առաջ չէր

քարոզուեր մարդոց թէ «Աստուած՝ անանկ սիրեց աշխարհը, մինչեւ որ իր միաձին Որդին տուաւ, որ ամէն ով որ անոր հաւատայ՝ չկորսուի, հապա յաւիտենական կեանք ունենայ։» ինչ որ կը քարոզուէր՝ սա էր թէ Աստուած այնպէս սիրեց աշխարհը որ եթէ հաւատան Անոր, պիտի ունենան բան մը որ կը կոչուի խաղաղութիւն, պիտի ունենան հանգիստ, ուրախութիւն, կամ ապահովութիւն։ Բայց անձամբ պիտի գտնէին թէ ով որ կը հաւատայ — այսինքն՝ ով որ կը սիրէ զնա, վասն զի հաւատքն է Սիրոյ առաջնորդը — ունի յաւիտենական լւան։ Աւետարանը կու տայ կեանք։ Երբէք մի տաք մարդոց բաժակ մը Աւետարան։ Մի տաք լոկ ուրախութիւն, լոկ խաղաղութիւն, լոկ հանգիստ, կամ լոկ ապահովութիւն։ Ըսէք թէ ինչպէս եկաւ Քրիստոս տալ մարդոց բեղմնաւոր կեանք մը, կեանք մը որ լի է սիրով, ուստի և փրկութեամբ՝ իրենց համար, կեանք մը որ լի է գործունէութեամբ՝ այլոց Քրիստեան համար։ Յայնժամ միայն կրնայ Աւետարանն իշխել մարդուն բովանդակ էութեան, մարմնոյն, մտաց և հոգւոյն, և մարդու եւ վարձատրել անոր բնութեան իւրաքանչիւր մասը։ Այժմու աւետարանական քարոզութեանց մեծ մասը ուղղեալ է մարդուն բնութեան մէկ մասին միայն։ Խաղաղութիւն կը քարոզուի և ոչ կեանք, հաւատք և ոչ Սէր, արդարութիւն և ոչ վերսաին ծնունդ։ Եւ

մարդիկ դարձեալ կը պաղին այսպիսի կրօնաքէ, վասն զի երբէք իրապէս գրաւեալ չէին անկէ, յարած չէին անոր իրենց բովանդակ բնութեամբ։ Ծնդունած չէին անկէ դադաշիարներ աւելի խորին և աւելի երանելի կենաց քան զայն զոր կը վարէին յառաջագոյն։ Արդարեւ ակնյայտնի է թէ միայն ճոխագոյն սէրը կարող է մրցիլ աշխարհի սիրոյն հետ։ Ճոխապէս սիրել՝ ճոխապէս ապրիլ է, և յաւիտեան սիրել՝ յաւիտեան ապրիլ է։ Ուստի յաւիտենական կեանքն անլոյծ կապով կապուած է սիրոյ հետ։ Կ'ուղենք ապրիլ յաւիտեան նոյն պատճառաւ որով կ'ուղենք ապրիլ վաղը։ Ինչո՞ւ կ'ուղէք ապրիլ վաղը։ Պատճառն այն է զի կայ մէկը որ կը սիրէ զձեղ և դոք կ'ուղէք տեսնել զնա վաղը, վայելել խը ընկերակցութիւնը և սիրել ի վոխարէն։ Զկայ ապրիլու ուրիշ պատճառ բաց ի սիրելէ և սիրուելէ։ Մարդ յայնժամ կը գործէ անձնասապանութիւն երբ չունի զոր որ սիրէ զինք։ Յորչափ ժամանակ ունի բարեկամ, այնպիսինք՝ որ կը սիրեն զինք և զորո կը սիրէ ինք, կ'ուղէ ապրիլ վասն զի ապրիլ սիրել է։ Շան սէրն իսկ կու տայ մարդուս փափաք՝ կենդանի մնալու։ Բայց եթէ այդ ալ անցնի, յայնժամ կ'անցնի կենաց ամէն հրապոյը և նա իւր ձեռամբ վերջ կու տայ իւր կենաց։ Յաւիտենական կեանքն եւս է ճանչնալ զԱպուած, և Աստուած սէր է։ «Աս է յաւիտենական

կեանքը, „կ'ըսէ Քրիստոս, “որ ճանշան քեզ  
մի միայն ճշմարիտ Յատուածդ, ու Յիսուս  
Քրիստոս՝ որն որ դուն խրկեցիր:” Խորհեցէք  
այս խօսքին վրայ: Սէրն յաւիտենական պար-  
տի ըլլալ: Այն է ինչ որ Յատուած է: Ուրեմն,  
վերջին վերջուծմամբ, սէրն է կեանք: Սէրը  
բնաւ չիյնար. կեանքն եւս, ցորչափ սէր կայ,  
բնաւ չիյնար: Այս է իմաստասիրութիւնն այն  
ճշմարտութեան զոր Պօղոս կ'ուզէ ցուցնել  
մեզ: Սէրն իրաց բնութենէն պարտի նկատ-  
ուիլ իբրեւ գերագոյն բան, վասն զի պիտի  
մայ, վասն զի իրաց բնութենէն է Յաւիտե-  
նական կեանք: Այս չէ բան մը զոր պիտի  
ունենանք դեռ, կամ զոր պիտի ստանանք երբ  
մեռնիք, այլ՝ բան մը որոյ մէջ կը դանուինք  
այժմէն: Եթէ արդէն չունիք կամ ստացած  
չենք հոս այդ կեանքը, յետ մահուան հաւա-  
նական չէ որ ստանանք: Այս աշխարհին մէջ  
ոչ մի յուռեգոյն բան կրնայ պատահէլ մար-  
դուս քան ապրիլ և մեծնալ միայնակ, առանց  
սիրելու և սիրուելու: Կորսուիլն է ապրիլ չնո-  
րոգուած վիճակի մէջ, առանց սիրելու և սիր-  
ուելու: և փրկուիլն է սիրել: Եւ այն որ սիրոյ  
մէջ կը բնակի արդէն Յատուածոյ մէջ կը բնակի,  
վասն զի Աստուած սէր է:

Արդ պիտի վերջացունենք մեր խօսքը: Ըն-  
թերցողներէս քանի՞ հոգիներ արդեօք կը խօս-  
տանան կարգալ տետրակիս սկիզբը դրուած  
գլուխը շաբաթը մի անդամ յառաջիկայ երեք

ամսոց մէջ: Անձ մը այդպէս ըրաւ անդամ մը  
և անոր բոլոր կեանքը վոխուեցաւ: Դոք եւս  
պիտի ընէք: Մեծագոյն բարւոյն համար է:  
կրնաք նախ ամէն օր կարգալ զայն, մանա-  
ւանդ այն համարները որ կը բացատրեն թէ  
ի՞նչ է կատարեալ նկարագիրը: “Սէրը եր-  
կայնամիտ է, քաղցը է, սէրը չնախանձիր,  
սէրը չգոռողանար, չհպարտանար:” Զեր կե-  
նայ մէջ փայլեցուցէք այս առաքինութիւն-  
ները: Յայնժամ ամէն ինչ որ ընէք՝ յաւիտե-  
նական պիտի ըլլայ: Կ'արժէ որ ընէք զայս,  
կ'արժէ որ ժամանակ վատնէք այս գործին  
համար: Ոչ ոք կրնայ դարձի դալ իւր քոնին  
մէջ: Հարկաւոր պայմանները կատարելու հա-  
մար պէտք է բառական աղօթք, խորհրդա-  
ծութիւն և ժամանակ, ինչպէս մարմնաւոր և  
մտաւոր ամէն գործի մէջ զարդանարու համար  
անհրաժեշտ է նախապատրաստութիւն և հոգ:  
Առ այս դարձուցէք ձեր ուշադրութիւնը և  
ամէն չան ի գործ դրէք որ ձեր նկարագիրը  
վոխարկուի այս գերազնիւ և կատարեալ նկա-  
րագիրն: Եթէ ակնարկ մը նետէք ձեր անց-  
եալ կենաց վրայ, պիտի տեսնէք թէ նշանա-  
ւոր վայրկեանները, այսինքն՝ այն վայրկեան-  
ները յորս իրապէս ապրած էք դոք, են այն  
վայրկեանները երբ գործած էք սիրոյ հոգ-  
ւոլ: Մինչ ձեր յիշողութեան օդնութեամբ կը  
պրպատէք անցեալը, կենաց բոլոր վաղանցուկ  
հաճոցներէն գեր ի վերոյ կը բարձրանան ձեր

առջեւ այն գերազոյն ժամք յորս կարող ե-  
ղած էք լոիկ և անշուկ բարիք գործել այն-  
պիսեաց որ ձեր շուրջ կ'ապրէին, բարիք՝ որ  
թերեւս այնչափ փոքր էին որ չեին արժանի  
յիշտակութեան, և սակայն կը զդաք թէ  
ազդած են ձեր յաւիտենական կենաց։ Թեր-  
եւս տեսած ենք դրեթէ բոլոր գեղեցիկ բա-  
ները զորս ստեղծած է Աստուած, թերեւս  
վայելած ենք դրեթէ ամէն հաճոյք զոր պատ-  
րաստած է մարդուն համար, և սակայն մինչ  
կը նայինք անցելցն վրայ, ոչ ինչ կը տեմնենք  
ուշագրաւ բաց ի չորս հինգ կարճ վայրիեան-  
ներէ յորս Աստուծոյ սէրն ընդ ազօտ իմն ցո-  
լցաւ մեր շարժմանց և սիրոյ փոքրիկ գործե-  
րուն մէջ, և կը թուի թէ ամէն մարդու կե-  
նաց մէջ եւս միայն այսպիսի գործերը և իրեւը  
մնայուն են։ Ուրիշ ամէն բան վաղանցուկ է  
մեր կենաց մէջ։ Ուրիշ ամէն բարիք երեւա-  
կայական են։ Սակայն սիրոյ գործերը, զորս ոչ  
ոք լսած է կամ կը նայ երբեք ըսել, մնայուն  
են, չեն անցնիր։

Մատթէոսի Աւետարանէն, ուր կը նկա-  
րագրուի մեղ Դատաստանին օրը սա այլաբա-  
նութեամբ թէ ջէրն մեր պիտի նստի յաթոռ  
և բամնէ ոչխարները այծերէն, կը տեմնենք  
թէ յանժամ պիտի չարցուի մարդոց, “ի՞նչ  
բանի հաւատացիք, ” այլ՝ “Ո՞չչափ սիրե-  
ցիք։” Բարեպաշտութեան փորձը, բարեպաշ-  
տութեան վերջնական փորձը, չէ կրօնասիրու-

թիւն, այլ՝ Սէր։ Այո, այն մեծ օրուան մէջ  
բարեպաշտութեան փորձը չէ կրօնասիրութիւն,  
այլ՝ Սէր։ Բարեպաշտութեան փորձը չէ այն  
գոր ըրած ենք, այն որուն հաւատացած ենք,  
այն զոր շահած ենք, այլ՝ սիրոյ այն հասա-  
րակ գործերը զորս կատարած ենք այս կենաց  
մէջ։ Այն ահաւոր օրուան մէջ մինչեւ իսկ պի-  
տի չյիշուին այն մեղքերը զորս արդեամիք  
գործած ենք հոս։ Պիտի դատուինք այն բա-  
ներուն համար զորս շնչ բռն նու կատարել։  
Ուրիշ դատաստան կարելի չէ վասն զի սէր  
չցուցնելով կը հաստատուի թէ ի մեղ չկայ  
Քրիստոսի չոփին, կ'ապացուցուի թէ երբեք  
չճանչանք զնա, թէ մեղ համար ի զուր ապ-  
րած է նա։ Կը հասկցուի թէ Քրիստոս ոչինչ  
ազդեցութիւն գործած է բոլը մեր խորհրդոց,  
բոլոր մեր կենաց վրայ, թէ ոչ իսկ մի ան-  
դամ մօտեցած ենք անոր այնպէս որ յափըշ-  
տակուէինք այն մեծ գթութենէն զոր ցուցած  
է աշխարհի։

Ուրեմն առջեւ պիտի ժողովին աշ-  
խարհի բոլոր ազգերը ։ Բայց առջեւ  
պիտի դատուինք։ Եւ նոյն իսկ այս տեսարանն  
անձայն կերպով պիտի դատէ զմեղ անհատ  
առ անհատ։ Հոն ներկայ պիտի ըլլան այնպի-  
սիք որոց հանդիպած և օգնած ենք։ Հոն պի-  
տի ըլլան նաեւ բազմութիւնք անձանց որոց  
չենք ողորմած զանցառութեամբ կամ արհա-  
մարհանօք։ Ուրիշ վկայ պիտի չկուտի։ Մի՛

խարուկիք։ Ի մէջ պիտի չբերուի ձեզ դէմ ու-  
րիշ ամբաստանութիւն, բայց միայն սիրոյ պա-  
կաս։ Ինչ որ ամէնքս պիտի լսենք Մեծ օր-  
ուան մէջ՝ պիտի չունենայ վերաբերութիւն  
աստուածաբանութեան, այլ՝ կենաց, պիտի  
չունենայ վերաբերութիւն եկեղեցեաց և սըր-  
բոց, այլ՝ անօթիներու և աղքատներու, պի-  
տի չունենայ վերաբերութիւն հաւատոյ դա-  
ւանութեանց և վարդապետութեանց, այլ՝  
ապաստանի և հանգերձի, պիտի չունենայ  
վերաբերութիւն Աստուածաշոնչներու և աղօ-  
թագրոց, այլ՝ յանուն Քրիստոսի տրուած  
պաղ ջրոյ գաւաթներու։ Գոհութիւն Աստու-  
ծոյ, Քրիստոնէութիւնն ըստ ամենայնի կը ջա-  
նայ լնուլ աշխարհի պէտքը։ Այնպէս վարուե-  
ցէք որ օդնէք այս շարժման։ Գոհութիւն Աս-  
տուծոյ, մարդիկ փոքր ինչ աւելի տեղեակ են  
այժմ թէ ինչ է կրօնքը, ինչ է Աստուած,  
ո՞վ է Քրիստոս և ո՞ւր է։ Ո՞վ է Քրիստոս։  
Նա որ կերակրեց անօթիները, հագուեցուց  
մերկերը, այցելեց հիւանդները։ Եւ ո՞ւր է  
Քրիստոս։ Ո՞ւր։ — “Ով որ ասանկ տղաց մը  
ընդունի իմ անունովս, ո՞ւ կ'ընդունի։” Եւ Ո՞վ  
են անոնք որ Քրիստոսին են։ “Ամէն ով որ  
կը սիրէ՝ Աստուծմէ ծնած է։”



2070

ԱՆ



1983